ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Նվիրվում է Սիլվա Կապուտիկյանի
ծննդյան 100-ամյակին

ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ԴՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ շրջանում Ս. Կապուտիկյանը քննադատություններ-ի թիրախ դարձավ մի քանի պատճառով։ Նախ նրան ամբաստանեցին Ղարաբաղյան շարժմանը դավաճանելու, ազգային զարթոնքի պահին անկախության գործընթացի դեմ արտահայտվելու, այնուհետեւ, ավելի ուշ՝ 1990-ականների վերջից, նրա վրա բարդվեցին հորն ուրանալու[1], Կրեմլի գործակալ լինելու[2], Սախարովի ու Պաստեռնակի[3] դեմ սուր քննադատական ելույթներ ունենալու, Սփյուռքը ճամփորդական ուղեգրություններում խեղաթյուրված կերպով ներկայացնելու, Ստալինին գովերգող բանաստեղծություններ գրելու, հայ գրողի պատիվը ծախելու[4] մեղադրանքները։ Կապուտիկյանի Ղարաբաղյան շրջանի, անկախության գործընթացի նկատմամբ ունեցած նրա քաղաքացիական դիրքորոշմանը հանգամանորեն անդրադարձել ենք[5], ուստի այստեղ կդիտարկենք հետխորհրդային շրջանում հնչած եւ մինչ օրս տարբեր ամբիոններից պարբերաբար հնչող մեղադրանքները՝ փորձելով ըստ կարելվույն փաստական հիմքով ապացուցել դրանց սնանկությունը։

* * *

Ի. դարի 90-ական թվականների սկզբին, երբ տիրապետող էր համընդհանուր դժգոհությունը իշխանությունների վարած քաղաքականու-

---

[1] https://armtimes.com/hy/article/70420?fb_comment_id=930347550344255_930796940299316#f2e116ba56a3de

[2] http://www.grakantert.am/archives/7867

[3] *Տես* Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Блеф по имени Сильва, *«Զորրորդ իշխանություն», 2001, դեկտեմբերի 12։*

[4] Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, *Հայրենապատումը նոր իրականության առջեւ.* XX *դար. «Քրիստոնյա Հայաստան», 2015, հունվար Բ., թ. 2(430)։*

[5] Գ. ՀԱԿՈԲՅԱՆ, *Սիլվա Կապուտիկյանը Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին, «Էջմիածին», Ե., 2018, էջ122։*

թյան հանդեպ, երբ արտագաղթն ահռելի չափերի էր հասել եւ խորանում էին ընկերային-տնտեսական խնդիրները՝ ապացուցելով Ս. Կապուտիկյանի մի շարք կանխատեսումների իսկությունը, թվում է՝ մեղմացան գրողի դեմ հարձակումներն ու նվազեցին նրա հասցեին հնչող՝ «ազգադավի», «ուրացողի» մեղադրանքները։ Սակայն Կապուտիկյանի՝ 1997 թվականին լույս տեսած «Էջեր փակ գզրոցներից» հրապարակախոսական հոդվածների ժողովածուի որոշ նորահայտ փաստեր «հարստացրեցին» գրողի քննադատների զինանոցը։

Փաստորեն, որքան էլ տարօրինակ է, իր գրական ու ոչ գրական հակառակորդներին քննադատության առատ նյութ տվեց հենց ինքը՝ բանաստեղծուհին՝ «Էջեր փակ գզրոցներից» ժողովածուում զարմանալի անկեղծությամբ շարադրելով հանրությանն անհայտ դրվագներ իր անձնական կյանքից, հասարակական գործունեությունից։ Փաստեր, որոնց շուրջ չեն դադարում քննարկումներն ու քննադատությունները մինչ օրս։

Նախ անդրադառնանք Կապուտիկյանի՝ հորն ուրանալու, հետեւաբար եւ Վանը ուրանալու[6] *մեղադրանքին, որի շուրջ ոչ միայն քննադատական հոդվածներ են տպագրվել, այլեւ բանավեճեր ու կլոր սեղաններ կազմակերպվել՝ բանաստեղծուհու գնահատման, նրա տեղն ու դերը հայ գրականության մեջ որոշելիս ելակետ ընդունելով հենց այս «փաստը»։*

«Էջեր փակ գզրոցներից» ժողովածուում Կապուտիկյանը խոստովանում է՝ 1937 թվականին այրել է դաշնակցական հոր փաստաթղթերը։

Հոր փաստաթղթերի հրկիզումն այն ժամանակ, երբ մոլեգնում էր ստալինյան տեռորը, երբ ամեն օր հայրուրավոր անմեղ մարդիկ էին ձերբակալվում ու գնդակահարվում, հոգեբանորեն վերլուծել է հենց ինքը՝ Կապուտիկյանը. *«Օ՜, այդ տարիներին «դրսի» դեմ անպաշտպան էին շատ ավելի հիմնավոր, ժայռ ու գրանիտով կառուցված կոփածո տներ, էլ ո՞ւր մնաց իմ հինգ մետրանոց՝ փողոցից ցուցափեղկի պես երեւացող խաղալիք-սենյակը։*

Գիշերներ էին լինում, որ չէի քնում, ականջ էի դնում փողոցով անցնող հատ ու կենտ մեքենաներին, ինձ թվում էր՝ ամեն մեքենա մեր տանը մոտենալիս դանդաղում է եւ ուր որ է պետք է կանգնի։ Ու երբ անցնում-գնում էր, ես թեթեւացած շունչ էի քաշում... Ո՞վ էի, ի՞նչ էի արել. հազիվ տասնյոթ տարեկան, մեր երկրի հանդեպ սիրով ու հիացումով լցված, աշխարհը միայն վարդագույն տեսնող մի աղջիկ էի դեռ, եւ ահա այդ սարսափակալած գիշերները... Օդն ասես թթվածնի փոխարեն հագեցված

[6] Դ. Գասպարյան, *նշվ. աշխ.։*

էր ահով, եւ այն չշնչելն անհնար էր։ Ահա այսպիսի մի հոգեվիճակով, սակայն չեմ հիշում երբ, հատկապես ինչ չարաշուք նախադեպքից հետո, հորեղբորս բանտարկվելու օրերին արդյոք, թե ուրիշ մի գիշեր, նույն այդ սենյակում ես կատարեցի (այժմյան իմ ըմբռնումով) կյանքիս ամենահանցավոր արարքը, ես կրակին հանձնեցի հին, դեղնած լրագրեր, լուսանկարներ, օրագրերի թերթիկներ՝ լցված մանր, խնամքոտ տողերով, եւ բոլորի տակ նույն անուն-ազգանունը՝ Բարունակ Կապուտիկյան... Դստեր մորմոքով ես խոնարհում եմ գլուխս նրա մաքուր հիշատակի առաջ, եւ խորն ու անփարատ է այդ մորմոքը, որովհետեւ այն խառնվում է ուշացած զղջումին, մեղավորության զգացումին։ Մեղավորություն նրա համար, որ մանուկ օրերիս բոլորովին չեմ ապրել նրա չլինելը, չլինելու ցավը, որ այդքան անմասնակից եմ մնացել մեր ընտանիքի վրա ծանրացած անմռունչ վշտին, որ ամեն անգամ հոգուցս բեռը նետելու, թեթեւացնելու զգացումով եմ գրել «մեռել է իմ ծնունդից առաջ» նախադասությունը, որ երկար ժամանակ նեղվել ու խուսափել եմ նրա անվան հիշատակումից... Եւ ամենից շատ, եւ ամենից սուր այն գիշերվա համար, այն փոքրոգի ու դաժան խարույկի համար, երբ ինքս դարձա իմ հավատաքննիչը...»[7]։

Իրականում հնարավոր չէ առանց հուզմունքի կարդալ բանաստեղծուհու խոստովանությունը՝ հոր հիշատակի հանդեպ գործած մեղքից ծնված խոր զղջման, իսկ կյանքի վերջում նաեւ ապաշխարող, ընթերցողի, իր ժողովրդի ներումը հայցող դստեր մորմոքուն տողերը։ Ընդ որում, գրողը կարող էր նաեւ չհրապարակել այս պատմությունը՝ զերծ մնալով մինչ օրս չմարող քննադատություններից։ Սակայն այնքան այրող է եղել զղջումն ու ամոթը, որ բանաստեղծուհին այդ խոստովանությամբ ասես փորձել է մաքրվել տարիներ շարունակ հոգին կրծող մեղքի հոգեմաշ զգացումից։ Սա է ամբողջը։ Այս անկեղծ խոստովանությունն է, որ առաջ բերեց մերօրյա «հավատաքննիչների» ցասումը՝ մոռացնել տալով նրանց մի պարզ ճշմարտություն՝ յուրաքանչյուր երեւույթ պետք է քննել տվյալ ժամանակաշրջանի ծիրում, դիտարկել, գնահատել ու արժեւորել պատմական տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկություններից ելնելով։ *Անհեթեթն այս հարցում նաեւ այն է, որ գրական ու ոչ գրական գործիչների մի փաղանգ փորձում է կասկածի տակ դնել ճանաչված գրողի, իր ողջ կյանքն ու գործունեությունը հայրենիքին ու հայությանը նվիրած բանաստեղծուհու գրական վաստակն ու գործը՝ «պաշտպանության տակ առնելով» Բարունակ*

[7] Ա. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, *Էջեր փակ զրոցներից, Երեւան, 1997, էջ 129։*

Կապուտիկյանին՝ համեստ մտավորականին, որի անունն անգամ գրականության պատմության մեջ արծարծվել է զուտ բանաստեղծուհու հայրը լինելու հանգամանքով։ Եւ եթե նույնիսկ ընդունելու լինենք (ընդգծենք՝ նույնիսկ) Կապուտիկյանի՝ հորն ուրանալու կամ դավաճանելու գրական ու ոչ գրական հեղինակությունների պնդումները, ապա ինչպես արդարացնենք բանաստեղծուհու ավանդը ջնջել-մերժելու, «գրականության պատմության մեջ»[8] մի համեստ տեղ հատկացնելու նրանց ջանքերը։ Մի՞թե տարբերություն կա՝ ինչպես են ոչնչացնում՝ կրակով, թե՞...

Պ. Սեւակը «Ս. Կապուտիկյանի մտորումները ճանապարհի կեսին» հոդվածում գրում է. «Ահա այս անկեղծությունն է, որ էժան են գնահատում որոշ գրականագետներ... էժան են գնահատում այն, ինչ իրապես ամենաթանկն է՝ անկեղծությունը։ Անկեղծությունը, որ քավում է ամեն ինչ։ Անկեղծությունը, որին գին են տալիս նույնիսկ քրեական դաժան օրենսգրքերը՝ մինչեւ անգամ ծանր հանցագործությունների մեջ։ Նույնիսկ քրեական օրենսգրքերը։

Եւ պիտի ցավի ոչ թե բանաստեղծը, որ ոմանց դուր չի գալիս իր անկեղծության պատճառով։ Պիտի ցավեն նրանք, որոնց դուր չի գալիս այդ անկեղծությունը»[9]։

* * *

Դառնանք Ս. Կապուտիկյանին «առաջադրվող» հաջորդ մեղադրանքին՝ «Սփյուռքը «Քարավաններում» կոպտագույն սխալներով»[10] *ներկայացնելուն։ «Քարավանները դեռ քայլում են» ուղեգրությունը 1962 թվականին Մերձավոր Արեւելքի հայկական համայնքներ (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս) կատարած Կապուտիկյանի ուղեւորության անմիջական տպավորություններով գրված, Սփյուռքի բոլոր կառույցները իրատեսորեն պատկերող ուղեգրություն է, որը, տպագրվելով 1964 թ., հիացմունքի մեծ ալիք բարձրացրեց ոչ միայն խորհրդահայ, այլեւ սփյուռքահայ ընթերցողների շրջանում, բարձր գնահատվեց տեղի եւ սփյուռքի ազդեցիկ մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների, գրականագետների կողմից։ Այն բնորոշվեց իբրեւ* Սփյուռքի մասին պատկերացում տվող գրվածքներից ամենածավալունը, ամենից հարուստը,

---

[8] https://armtimes.com/hy/article/70420?fb_comment_id=930347550344255_930796940299316#f2e116ba56a3de

[9] Պ. Սեւակ, *Երկերի ժողովածու 6 հատորով, հտ. 6, Երեւան, 1976, էջ 385։*

[10] Դ. Գասպարյան, *նշվ. աշխ.։*

ընդգրկունը... *Սփյուռքի խոշորագույն հատվածների համայնապատկերը ներկայացնելու պատիվն ու պարտավորությունն ունեցող երկ*[11]*։ Ի հավելումն այս գնահատականների՝ Լ. Հախվերդյանը գրում է. «Հիրավի, դյուրին բան չէ ներկայացնել Սփյուռքը իր ունեցած վարժարաններով, կրթարաններով, մամուլով, կուսակցություններով եւ կուսակցական հակամարտություններով, մշակութային ու բարեգործական միություններով... Այսքան էջերը հագեցնելու համար, իրոք, պետք է հագեցած լինել ոչ միայն հուզականորեն... այլեւ իմացությամբ՝ Սփյուռքի անցյալի ու ներկայի մասին»*[12]*։ Մեկ այլ գնահատականում նշվում է. «Քայլ առ քայլ հետ տանելով վարագույրը՝ Կապուտիկյանը բացում է սփյուռքահայության կյանքի պատկերն իր դժվարություններով ու փորձություններով, մաքառումով ու պայքարով, ողբերգություններով ու ողբերգությունից ծնունդ առնող զավեշտով... «Քարավանները դեռ քայլում են» գիրքը բանաստեղծուհու հայրենասիրական հորդացող զգացումների, հայրենիքի, մայր ժողովրդի ճակատագրի, անցյալի, ներկայի ու ապագայի շուրջ ունեցած մտածումների, խոհերի, դատումների հավաքական արտահայտությունն է»*[13]*։*

«Քարավանները դեռ քայլում են» եւ 1976 թ. լույս տեսած՝ Հյուսիսային Ամերիկայի հայ գաղթավայրերի մասին պատմող «Խճանկար քարտեզի եւ հոգու գույներից» ուղեգրությունների մասին ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը գրում է. «Դժվար է գերագնահատել այն դերը, որ այդ գրքերը կատարեցին (եւ դեռ կոչված են կատարելու) հայ ժողովրդի հոգեւոր կյանքում։ Մի կողմից նրանք եկան պատասխան տալու այն բուռն հարցասիրությանը, որ հատկապես 50-ական թթ. վերջից սփյուռքահայ կյանքի եւ մշակույթի նկատմամբ առաջացավ Սովետական Հայաստանում։ Ինչ է իրենից ներկայացնում սփյուռքը, ինչ սոցիալական եւ բարոյահոգեբանական կառուցվածք ունի արտասահմանյան հայ գաղթօջախների հասարակական կյանքը,-այս հարցերը պարզաբանելու, մայր հայրենիքի եւ արտասահմանյան հայության միջեւ հոգեւոր երկխոսություն բացելու համար Սիլվա Կապուտիկյանն ավելին արեց, քան սովետահայ կամ սփյուռքահայ որեւէ այլ գրող»[14]*։*

---

[11] Լ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ, *Ժամանակի հետ, Երեւան, 1976, էջ 147–148։*

[12] *Տե՛ս անդ։*

[13] Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ, *Սիլվա Կապուտիկյան, Երեւան, 1983, էջ 186։*

[14] Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, *Բանաստեղծություններ, հտ. 1. տե՛ս Էդ. Ջրբաշյանի Առաջաբանը, Երեւան, 1984, էջ17։*

Ուղեգրության հիպնոսող ազդեցությունից զերծ չի մնում նաեւ Մարտիրոս Սարյանը. «Քարավաններ շատ եմ նկարել, նկարել եմ շեկ անապատ, կապույտ ուղտեր, երեկոյի մոխրագույն ստվերներ եւ շեկ ուղտեր... Իսկ սա, այս մեկը, որ հիմա կարդում եմ, ո՛չ, չեմ կարդում, այլ նայում եմ, որովհետեւ լավ գրված գիրքը հետաքրքիր նկարի նման է, Սիլվա Կապուտիկյանի «Քարավաններն» են, որ գնում են ու դեռ երկար պիտի գնան։ Ինձ մի պահ այս գիրքը տանում է տարիների խորքը, կես դար ետ, երբ մեծ արհավիրքի օրերին եկա հայրենիք, Հայաստան, ու Վաղարշապատի Մայր-Տաճարի պատերի տակ տեսա որբեր, որդեկորույս մայրեր, մահից ճողոպրած ծերունիներ... Սիլվա Կապուտիկյանի գիրքը մի նոր հիշեցում է։ Եւ այս քարավանները, որ ապրում, շնչում են գրքի էջերում, մարդկային քարավաններ են՝ ճամփա ելած դեռ 1915 թվականին։ Այս ողբը նույն ողբն է, ինչ լսվել է դեպի Դեր-Զոր քշվող հայ գաղթականների կրծքից, ու թեպետ փոխվել են բառերը, բայց էությամբ նույնն է, որովհետեւ քանի դեռ նրանք դեգերում են աշխարհում ու չեն կարող վերադառնալ իրենց մայր հայրենիքը, դատապարտված են մահվան, լինի դա ուղղակի թե սպիտակ ջարդ։ Մեր ժողովրդի արժանավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը չէր կարող չզգալ ու չգրել այս մասին։ Ո՞ր մայրը չի փնտրում իր կորցրած զավակին... Եթե ձեռքդ առար այս գիրքը, վայր չես դնի մինչեւ ծայրից ծայր չկարդաս, եւ սա իսկական արվեստի այն մեծ ուժն է, որով իմաստնանում է կտավը, մարմարի կտորը, գիրքն ու մեղեդին»[15]։

Քարավաններին տրված բազմաթիվ գնահատականներից չենք կարող չառանձնացնել սփյուռքահայ մեծանուն գրող, գրական միջավայրում իր ծայրաստիճան բծախնդրությամբ հայտնի Շահան Շահնուրի՝ Կապուտիկյանին ուղղված նամակը։ Այն չափազանց կարեւոր է նաեւ իբրեւ գաղթաշխարհը մինչեւ ուղնուծուծը ճանաչող սփյուռքահայի վավերագիր. «Կարաւաններով Դուք գրած էք մեծապէս թանկագին գիրք մը, որուն առթիւ պէտք չէ վարանիլ գործածելու դրուատանքի ամենէն լեցուն տարազները։ Ընթերցողը, որ եմ, եւ որ դժուարահաճի իր համբաւը ուրիշէն չէ շորթած, պիտի ուզէր չափազանցնէր իր ներբողները, զանոնք լաւագոյնս լսելի ընելու համար։ Առաջին անգամն է, որ Ձեզ կկարդամ եւ կխոստովանիմ, որ կարելի չէ պաղարիւնութեամբ խօսել գիրքի մը վրայ, որ ընթերցողը կալեկոծէ, կխռովէ եւ ներքին փլուզումի ծայրավիճակներուն

[15] *Կապուտիկյան տուն-թանգարան, Կապուտիկյանի ֆոնդ 2, թ. 2։*

կհասուցանէ։ Անզուգական իր տեսակին մէջ ան կպարզէ զգացական եւ իմացական աշխարհ մը, որ ձիրքերով հարուստ գրիչէ մը միայն կրնայ գալ... Գրական տաղանդին հետ զուգընթաց՝ Դուք կպարզէք առօրեայ այնպիսի յատկութիւններ եւ ձիրքեր, որ հազուագիւտ են գրչի մարդոց մօտ։ Պերճասաց, լեզուվանի եւ պատրաստաբան, Ձեր անձէն կճառագէ մագնիսական խորունկ ալիք մը, որ գիտէ ամբոխները գրաւիլ։ ...«Կարաւանները» osmose *մը (կապ, մերձեցում) կստեղծեն մեր երկու հատուածներուն միջեւ, ինչ որ գրքին նուազագոյն արժանիքներէն մէկը չէ»*[16]*։*

Այսքանից հետո մնում է հարցնել «Սփյուռքը «Քարաւաններում» կոպտագույն սխալներով ներկայացնելու» տեսակետի հեղինակին՝ այդ ինչ «կոպտագույն» սխալներ են նկատվել, որ վրիպել են հենց սփյուռքահայերի աչքերից...

Հետխորհրդային շրջանում մեկ անգամ չէ, որ Ս. Կապուտիկյանը քննադատվել է կոմունիստական կուսակցությանը փառաբանելու համար, շահարկվել ու շահարկվում է նաեւ նրա Ստալինյան Շ-րդ մրցանակ ստանալու փաստը, որը դիտվել է իբրեւ վարչակարգին ծառայելու պերճախոս վկայություն։ «Կապուտիկյանն ամեն ինչի դիմեց՝ Ստալինյան մրցանակ ստանալու համար։ Ստալինին եւ նրա անունով իմաստավորող ամեն ինչի մասին բանաստեղծություններ ու գրքեր գրեց, ծախեց հայ գրողի պատիվը...»[17]*։ Հիշենք, որ կոմունիստական առաջնորդներին ձոներ ստիպված են եղել նվիրել գրեթե բոլոր խորհրդային գրողները*[18]*։ Բայց, որպես կանոն, նրանց այդ գովերգերը դիտվել են որպես ժամանակաշրջանի պարտադրանք, տուրք, նույնիսկ անհրաժեշտություն, իսկ Կապուտիկյանի պարագային դա որակվել է իբրեւ «ստորաքարշություն», մեդալներ ու կոչումներ ստանալու, վարչակարգին կուրորեն ծառայելու միջոց*[19]*։ Մեր համոզմամբ՝ Կապուտիկյանին տրվող բնութագրումներն ու որակումները մակերեսային են ու անձնավորված, քանի որ խոսքը վերաբերում է մի ժամանակաշրջանի, երբ ամբողջ խորհրդային ժողովուրդն էր գտնվում գաղափարախոսական ճնշման ներքո։ Այս առումով գրականագետի՝ Հ. Սահյանի նույն շրջանի գործունեությանը տրված գնահատականը բնութագրական է նաեւ Կապուտիկյանի համար. «Իսկ*

---

[16] *Կապուտիկյան տուն-թանգարան, Կապուտիկյանի ֆոնդ 1, թ. 3։*

[17] Դ. Գասպարյան, *նշվ. աշխ.։*

[18] *Տես օր.՝* https://lurer.com/?p=99987&l=am:

[19] Լ. Տեր-Պետրոսյան,*Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին, «Հայք», 1990, 6 մայիսի, թ. 13։*

ինչ վերաբերում է բանաստեղծին, ապա նա «հավատով» անգամ գաղափարական տուրքը տալով հանդերձ, նպաստել է հայրենի երկրի եւ հարազատ ժողովրդի կայացմանը իր հողի վրա»[20]*։*

Անդրադառնանք Կապուտիկյանի հասցեին հնչող եւս մեկ-երկու չհիմնավորված՝ «1958 թվականին Սախարովի դեմ գրված սարսափելի հոդվածի» եւ «Պաստեռնակին մահվան հասցնելու» մեղադրանքներին։ «Կապուտիկյանի ամենամեծ վրիպումը Սախարովի դեմ գրված սարսափելի հոդվածն էր»[21]. *համացանցային լրագրությանը հատուկ՝ «գայթակղիչ» վերնագրով նյութը (գրելու դրդապատճառը բանաստեղծուհու մահվան 11-րդ տարելիցն էր), ավելի մեծ թվով ընթերցող գրավելու նպատակ էր հետապնդում, քան թե բանաստեղծուհուն նվիրված՝ հավուր պատշաճի ասված հիշատակի ու հարգանքի խոսք էր։ Գաղտնիք չէ, որ հոդվածի վերնագիրը հինգ անգամ ավելի շատ են կարդում, քան բուն հոդվածը*[22]*։ Ջսեւեռվելով նյութում հնչած մի շարք տեսակետների վրա, որոնց համաձայն չենք (մասնավորապես այն, որ Կապուտիկյանը կրում էր Սեւակի ազդեցությունը), անդրադառնանք նյութի վերնագիր դարձած մտքին։ Իր համարձակ ու սուր ելույթների շնորհիվ ռուս մտավորականության շրջանում նույնիսկ այլախոհ համարված*[23] *գրողին նման մեղադրանք ներկայացնելիս առավել փաստարկված անդրադարձ էր հարկավոր։ Եւ եթե Կապուտիկյանի դեմ ուղղված՝ վերը թվարկված մեղադրանքները հիմնվում էին առկա փաստերի խեղաթյուրումների կամ կիսաճշմարտությունների վրա, ապա այս դեպքում միանգամայն անհասկանալի է նման մեղադրանքի դրդապատճառն ու անհայտ՝ դրա աղբյուրը*[24]*։ Հիշենք, որ Գզրոցներում Կապուտիկյանն անդրադառնում է իր եւ Ելենա Բոնների մտերմությանը, այնուհետեւ դարձյալ իրեն հատուկ անկեղծությամբ խոստովանում, որ նրա ամուսնությունն այլախոհ Սախարովի հետ իրեն վախեցրել է։ «Գուցե... տարօրինակ հնչի «վախ» բառը, բայց իզուր... Ճիշտ է այն, որ խորհրդային կյանքի ոլորաններով ու քարավաններով*

---

[20] Դ. Գասպարյան, *Համո Սահյան, Երեւան, 2003, էջ 39։*

[21] https://www.a1plus.am/1563330.html

[22] В. П. Шейнов, Пиар белый и черный, Москва, 2005, с. 99.

[23] Ս. Կապուտիկյան, *Էջեր փակ զրոցներից, Երեւան, 1997, էջ 99։*

[24] *Քանի որ հասանելի որեւէ արխիվում հնարավոր չէր գտնել նման բովանդակությամբ հրապարակում, դիմեցինք ՀՀ ԱԱԾ՝ նշյալ «զրպարտագիրը» տեղի արխիվում գտնելու ակնկալությամբ։ ՀՀ ԱԱԾ հաշվառման եւ արխիվային ֆոնդերի վարչությունից ստացված 2018 թ. օգոստոսի 20-ի N 24/2469 գրության համաձայն՝ «ՀՀ ԱԱԾ արխիվում Սիլվա Կապուտիկյանի վերաբերյալ նյութեր առկա չեն»։*

անցած յուրաքանչյուր մարդու մեջ միշտ էլ ներկա է եղել վախի զգացումը, եւ ես բացառություն չեմ կարող կազմել։ Միայն թե մեկին հաջողվել է հաղթահարել այդ զգացումը, մի երկրորդին մասամբ, երրորդին ամենեւին։ Ինձ կարծես թե ընդհանուր առմամբ հաջողվել է դա, բայց, ցավոք, ոչ միշտ»[25],- գրում է Կապուտիկյանը՝ պատմելով, որ Մոսկվայում գտնվելիս խուսափել է հանդիպել Ելենա Բոներին՝ իր արածը որակելով իբրեւ «փոքրոգություն»։ Սակայն ավելի ուշ, երբ Սախարովի դեմ հալածանքն ավելի էր ուժգնացել, Կապուտիկյանը սիրով հյուրընկալում է Հայաստանում գտնվող Սախարովին ու Ելենա Բոներին, նույնիսկ հիսուն ռուբլի պարտք է տալիս՝ Բոների հավանած վզնոցը գնելու համար։ «Մոսկվա վերադառնալուց մի շաբաթ հազիվ անցած՝ դրամը փոստով ուղարկեցին, եւ հիմա իմ թղթերում կա փոստային փոխադրության կտրոն-նամակը՝ գրված Սախարովի ձեռքով, շնորհակալական ջերմ արտահայտություններով։ Հետագայում ես շատ հանդիպումներ ունեցա արժանավոր այդ զույգի հետ եւ, կարծում եմ, այդ շփումների ժամանակ, մանավանդ Ղարաբաղյան շարժման օրերին ինձ հաջողվեց, եթե ոչ իրենց, գոնե իմ աչքում «ռեաբիլիտացիայի» ենթարկել իմ վարկը»[26]։ Սա է Կապուտիկյան-Սախարով առնչության ամբողջ պատմությունը։

Իսկ ինչ վերաբերում է «Պաստեռնակին մահվան հասցնելու» մեղադրանքին, ապա Պաստեռնակի դեմ քննադատական, իր իսկ բնորոշմամբ՝ «մի պարզունակ հիմարություն»-ելույթով Կապուտիկյանն իսկապես հանդես է եկել 1956 թվականին՝ գրողների տանը գումարված ժողովում։ «Մի ուրիշ մեղավորության զգացում, որն ավելի խորն է, եւ որը, դժբախտաբար, հնարավոր չէ ամոքել, մինչեւ այժմ էլ հետապնդում է ինձ։ Դա իմ ելույթն էր Բորիս Պաստեռնակի կապակցությամբ... Այդպես վարվելու համար թեեւ արդարացում չունեմ, բայց ունեմ միայն ինձ հայտնի բացատրություն»[27]։ Իսկ բացատրությունն այն էր, որ ելույթի նախօրեին Կապուտիկյանը մի խումբ երիտասարդ գրողների հետ հանդիպում է Սփյուռքից առաջին անգամ Երեւան ժամանած՝ «նախկինում դաշնակցության անդամ... բայց մինչեւ ուղնուծուծը դաշնակցության գաղափարները իր մեջ կրող մի անձնավորության»՝ «Նաիրի» շաբաթաթերթի խմբագիր Անդրանիկ Ծառուկյանի հետ, ամբողջ օրը շրջում

[25] Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, *Էջեր փակ զրոցներից, Երեւան, 1997, էջ 99։*
[26] *Ն. տ., էջ 100։*
[27] *Ն. տ., էջ 100–101։*

պատմամշակութային օջախներով, իսկ վերջում՝ մինչեւ գիշերվա 1–2-ը, Կապուտիկյանի տանը շարունակում են «հոգեւոր ու մի քիչ էլ մարմնավոր,-կոնյակ, սուրճ, մրգեր,-խրախճանքը... Երբ առավոտյան զարթնեցի՝ նոր միայն ինձ հաշիվ տվեցի երեկվա մեր արածի մասին. դաշնակցական գրող, հայհոյելու չափ ազատախոս եւ ազատամիտ արտասահմանյան խմբագիր, ու մենք մինչեւ ուշ գիշեր շրջել ենք նրա հետ՝ ինքներս էլ միանալով նրա բացախոսությանը մեր կարգերի, մեր կուսակցության հասցեին»[28]։ Գլուխ բարձրացրած «Homo Sovetikus»-ի բնազդական վախը Կապուտիկյանին մղում է ապացուցելու իր «գաղափարական նվիրվածությունը», եւ նա ամբիոն է բարձրանում՝ հնչեցնելով Պաստեռնակի դեմ ուղղված ելույթը, որի «կվինտ-էսենցիան» Պաստեռնակին Իսահակյանի հետ համեմատելն էր՝ հօգուտ Վարպետի մարդկային, բարեհամբույր, մեր ցավ ու հոգսով ապրող տեսակի։ Զղջումն ու ամոթի զգացումը տանջել է Կապուտիկյանին տարիներ շարունակ՝ ստիպելով այս միջադեպի մասին գրել «Գզրոցներում»։ «Ահա սա էր իմ ասածի «կվինտ-էսենցիան», մի պարզունակ հիմարություն, որը, սակայն, ցեխաջրի ցայտեր թողեց ինձ վրա, մնաց ներկաների եւ, ամենից շատ, իմ հիշողության մեջ...»[29]։ Այն ժամանակ, երբ ամբողջ ԽՍՀՄ-ում գումարվում էին ժողովներ, դատապարտում «հայրենիքը ծախած, երկերեսանի» Պաստեռնակին, երբ նրան վարչակարգի գլխավոր դեմքերն էին հալածում՝ օգտագործելով հնարավոր ու անհնար բոլոր միջոցները, միամտություն է պնդելը, թե Կապուտիկյանի «պարզունակ» ելույթը կարող էր «մահվան հասցնել» գրողին։

Ի մի բերելով փաստական նյութը, կարող ենք նշել, որ ապրելով ԽՍՀՄ դժվարին, մտավորականի ինքնությունն ու անհատականությունը ճնշող ժամանակաշրջանում՝ Սիլվա Կապուտիկյանն առաջնորդվեց բացառապես ազգային հետաքրքրություններով ու շահերով՝ միշտ հավատարիմ մնալով մարդ կոչմանը։ Իսկ մոլորություններն ու վրիպումները, որոնց մասին անկեղծորեն խոստովանել է հենց ինքը, եւս մարդկային են, ուստի գրականագետները նրա կյանքն ու գործը քննելիս պարտավոր են նկատի ունենալ, որ յուրաքանչյուր երեւույթ պետք է քննել տվյալ ժամանակաշրջանի ծիրում, դիտարկել, գնահատել ու արժեւորել պատմական տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկություններից ելնելով։

---

[28] *Անդ։*

[29] *Ն.տ., էջ 103։*

РЕЗЮМЕ

Статья посвящена ряду обвинений против Сильвы Капутикян в постсоветское время, фактическими материалами доказывается их пустота, поверхностная и персонифицированная натура критики. В частности, Г. Акопян затрагивает обвинения великой писательницы за предательство отца, критику в отношении Сахарова и Пастернака, неверное толкование диаспоры в путевых заметках, написание стихов, восхваляющих Сталина, и продажу чести армянского писателя, утверждая, что историки литературы, рассматривая жизнь и творчество Капутикян (и не только ее), должны учитывать, что каждое явление следует рассматривать в контексте данной эпохи, наблюдать и оценивать, исходя из особенностей данного исторического периода.

SUMMARY

The article focuses on a number of allegations against Silva Kaputikyan in the post-Soviet era, proving their emptiness with factual materials, superficial and personalized nature of criticism. Particularly, G. Hakobyan touches on the accusations of the great writer (for betraying her father, for criticisms against Sakharov and Pasternak, for the misinterpretation of travel notes by the Diaspora, for writing poems dedicated to Stalin) claiming that when examining the life and works of Kaputikyan (and not only her), literary historians should take into account the fact that every phenomenon should be considered in the era of the given period, observing and evaluating based on the peculiarities of that historical period.